ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ «ԼԵՎԻԱՖԱՆ» ԵՎ «ԱՓՐՈԴԻՏԵ» ԷՆԵՐԳԵՏԻԿ «ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ»

Մնակ Սարուխանյան[*]

Արևելյան Միջերկրածովի շրջանում բնական գազի խոշոր պաշարների հայտնաբերումն այս տարածաշրջանը դարձրել է նոր էներգետիկ և քաղաքական հակասությունների թատերաբեմ: Մի կողմից՝ Իսրայելն ու Կիպրոսը, որոնց ծովային տարածքներում էլ հենց հայտնաբերվել են պաշարները, մյուս կողմից՝ Թուրքիան, որը ցանկանում է ամրապնդել դիրքերը Միջերկրածովյան ողջ տարածքում, նպատակ ունեն իրենց իրավունքները պաշտպանել գազային հանքածովային պաշարների նկատմամբ:

«Լևիաֆան» հանքավայրը՝ որպես Իսրայելի էներգետիկ անվտանգության աղբյուր

Իսրայելական Հայֆայից 135 կմ հեռավորության վրա, Միջերկրական ծովի շելֆում գտնվող «Լևիաֆան» բնական գազի հանքավայրը հայտնաբերվել է 2010-ին, ամերիկյան *Noble Energy* ընկերության կողմից, որը դեռևս 2008-ին Իսրայելի կառավարության հետ կնքել էր պայմանագիր ծովային շելֆի շրջանում բնական գազի և նավթի պաշարների որոնման համատեղ աշխատանքներ սկսելու վերաբերյալ: Արդեն 2010թ. հայտնաբերված պաշարները կարելի է համարել տպավորիչ, քանի որ համաձայն *Noble Energy*-ի՝ բնական գազի ընդհանուր պաշարներն այս հանքավայրում գնահատվում են մինչև *450 մլրդ մ³,* ինչն այն դարձնում է աշխարհի խոշորագույն հանքավայրերից մեկը: Իսրայելի համար «Լևիաֆանի» կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հրեական պետությունը դրա շնորհիվ կարող է

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ք.գ.թ.:

ազատվել Եգիպտոսից էներգետիկ կախվածությունից, որտեղից Իսրայել է ներկրվում բնական գազը: Հաշվի առնելով 2011-ից Եգիպտոսում սկսված քաղաքական գործընթացները, որոնք ի վերջո իշխանության կարող են բերել հակաիսրայելական կոշտ դիրքորոշում ունեցող «Մուսուլման եղբայրներին», սեփական բնական գազի հանքավայրերի հայտնաբերումն ու մշակումն Իսրայելի համար դարձել են կարևորագույն նշանակություն ունեցող ազգային խնդիր:

Մյուս կողմից, Իսրայելը նաև անմիջականորեն շահագրգռված է նվազեցնելու էներգետիկ համագործակցության մակարդակը Թուրքիայի հետ, որը վերջին տարիներին հանդես չի գալիս որպես Իսրայելի վստահելի գործընկեր և նպատակ ունի ամրապնդել դիրքերը Մերձավոր Արևելքում, ինչի համար լայնորեն օգտագործում է տեղի իսլամիստներին: Առավելագույնը տարեկան *3 մլրդ մ³* գազի սպառման ծավալներ ունեցող Իսրայելի համար *450 մլրդ մ³* պաշարներ ունեցող գազի հանքավայրը կարող է 100 տարուց ավելի դառնալ բնական գազի ստացման աղբյուր, ինչը հիմնավորապես կլուծի էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրը և կապահովի պետության էներգետիկ անկախությունը Թուրքիայից և Եգիպտոսից: Սա բավական կարևոր խնդիր է Իսրայելի համար, քանի որ տարածաշրջանը գնում է ակտիվ ապակայունացման ճանապարհով. Սիրիան և Իրանը կարող են դառնալ հակամարտությունների նոր թատերաբեմ, ինչի արդյունքում կխաթարվի ոչ միայն ռազմաքաղաքական, այլ նաև էներգետիկ անվտանգության համակարգը: Իսկ վերջինս կարող է անմիջական բացասական ազդեցություն ունենալ Իսրայելի տնտեսական և ազգային անվտանգության վրա:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ «Լևիաֆանը» պարունակում է նաև բավական խոշոր նավթային պաշարներ, որոնց կոնկրետ չափը դեռևս որոշված չէ: Նախնական հետախուզության տվյալներով՝ դրանց չափը կարող է անցնել *500 մլն տոննան*, ինչը հանքավայրը դարձնում է նաև կարևոր նավթային գործոն: Համապատասխան ներդրումների դեպքում Իսրայելը կարող է ոչ միայն ապահովել նավթի սեփական կարիքները, այլ նաև դառնալ նավթի ոչ խոշոր, բայց միևնույն է՝ արտահանող: Սա կարևոր նշանա-

կություն ունեցող իրադարձություն կարող է լինել ոչ միայն Իսրայելի, այլ նաև ամբողջ տարածաշրջանի համար, քանի որ լիովին կվերանա Իսրայելի կախվածությունն ադրբեջանական նավթից, ինչպես նաև թուրքական Ջեյհան նավահանգստից: Վերջինս, ըստ թուրքական պատկերացումների, պետք է դառնա տարածաշրջանային խոշորագույն էներգետիկ հաբը, որի նշանակությունը հիմնականում պայմանավորված է Միջերկրածովյան տարածաշրջանի՝ Կասպիցի շրջանից նավթային կախվածությամբ: Այդ կախվածությունը «Էնիաֆանի» շնորհիվ կարող է պարզապես վերանալ:

Միևնույն ժամանակ, Միջերկրականում հայտնաբերված բնական գազի զգալի պաշարները կարող են բացասական ազդեցություն ունենալ վերջին տարիներին բազմաթիվ քննարկումների առարկա դարձած «Նաբուկկո» նախագծի իրականացման վրա: Ակնհայտ է, որ եթե ԵՄ-ը կարող է ստանալ ապահով մուտք դեպի Միջերկրականի բնական գազի հանքավայրեր, ապա նրա հետաքրքրվածությունը «Նաբուկկոյի» նկատմամբ զգալիորեն կնվազի՝ հաշվի առնելով նաև այն բարդ քաղաքական իրավիճակը, որը ստեղծվել է տարածաշրջանում. պարզ չէ Թուրքիայի քաղաքականությունը հեռանկարում (իսլամացում, թե անդամակցություն ԵՄ-ին), իրանա-ամերիկյան ռազմական բախման հնարավորությունը դեռևս պահպանվում է, Ռուսաստանը Վ.Պուտինի նախագահ ընտրվելուց հետո որդեգրելու է ավելի ագրեսիվ քաղաքականություն Կենտրոնական Ասիայում՝ փորձելով ստեղծել «Եվրասիական միություն», Ադրբեջանն էլ վերջին տարիներին ընդգրկվում է «հեղափոխության ռիսկեր» ունեցող պետությունների ցուցակներում:

«Էնիաֆանի» մշակումը

Իսրայելի համար, որը չունի համապատասխան միջոցներ հանքավայրի մշակման և արդյունահանման ապահովման համար, կարևոր նշանակություն ունի, թե ումից է ստանալու հանքավայրում համապատասխան ներդրումներ կատարելու աջակցությունը: Նավթահանքի մշակման համար ստեղծված կոնսորցիումը բաղկացած է փոքր ընկերություններից, որոնք սուղ միջոցների պատճառով չեն կարող համարժեք ներդրումներ ապահովել:

«Լևիաֆանի» մշակման կոնսորցիումը

Ընկերությունը	Մասնաբաժինը
Noble Energy	40%
Delek Drilling (Tel-Aviv)	23%
Avner Oil & Gas (Tel-Aviv)	23%
Ratio Oil Exploration (Tel-Aviv)	14%

Հենց այս պատճառով այսօր ակտիվ քննարկման առարկա է այն, թե $15 մլրդ կապիտալացում ունեցող *Noble Energy* ընկերությունն ինչ իրական հնարավորություն ունի «Լևիաֆան» հանքավայրը մշակելու համար: Ամերիկյան վերլուծաբան Ջիմ Ֆինքի՝ հեղինակավոր *Investing Daily* պարբերականում հրապարակած կարծիքի համաձայն[1]՝ ամերիկյան այս ընկերությունը, որը տեղակայված է Տեխասում և դասական անգլոսաքսոնյան ընկերություն է, ստիպված է լինելու դիրքերը զիջել ավելի խոշոր ընկերության, որը կկարողանա համապատասխան գումարներ ներդնել գազի հանքավայրի մշակման և գազի արտահանման համար:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ չնայած անվանապես «Լևիաֆանում» ամենամեծ չափաբաժինն ունի *Noble Energy*-ն, իրական չափաբաժինների հարաբերակցություններն այլ են. բանն այն է, որ իսրայելական *Delek Drilling* և *Avner Oil & Gas* ընկերությունները միևնույն *Delek Group* ընկերությունների խմբին են պատկանում, և այս իմաստով հանքավայրում ամենամեծ չափաբաժինը պատկանում է հենց *Delek Group*-ին՝ 46%:

Ակնհայտ է, որ «Լևիաֆանը» նոր ներդրողներ է բերելու տարածաշրջան, որոնք իրենց պոտենցիալով և ազդեցությամբ կարող են լինել աշխարհի խոշորագույն նավթային և գազային ընկերությունները: Վերջիններս սերտորեն կապված են արևմտյան կառավարությունների հետ, որոշ ընկերություններում խոշոր չափաբաժիններ ունեն հրեական համայնքի ներկայացուցիչները: Ընթացող բանակցությունների բնական շարունակություն կարող է լինել ոչ խոշոր *Noble Energy*-ի կողմից սեփական մասնաբաժնի վաճառքը որևէ խոշոր էներգետիկ վերազգային ընկերության, որը կկարողանա ոչ միայն տեխնիկապես սպասարկել նախագիծը, այլ նաև ապահովել համապատասխան քա-

[1] *Jim Fink* - Israel's Huge Natural Gas Discovery. *Investing Daily* // 21 January, 2011.

ղաքական աջակցություն՝ հաշվի առնելով Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը, որն ուղղված է կիպրական «Ափրոդիտեում» և իսրայելական «Լևիաֆանում» սեփական մասնաբաժինը ստանալուն: Սակայն մինչև թուրքական շահերին անցում կատարելը՝ անդրադառնանք կիպրական «Ափրոդիտե» հանքավայրին, որը, ըստ երկրաբանական չափանիշների, «Լևիաֆանի» բնական շարունակությունն է, որը, սակայն, քաղաքականապես նույնպես կապել է Իսրայելին և Կիպրոսին:

«Ափրոդիտե» հանքավայրը՝ որպես Կիպրոսի տնտեսական անվտանգության երաշխիք

«Ափրոդիտե» հանքավայրը, որն իսրայելական «Լևիաֆանի» շարունակությունն է, բայց գտնվում է Կիպրոսի ծովային տարածքում, հայտնաբերվել է 2011-ին, նույն *Noble Energy* ընկերության կողմից: Հանքավայրի ծավալներն ու պաշարները նշանակալից են: Արդեն իսկ կատարված երկրաբանական հետախուզական աշխատանքները ցույց են տալիս, որ հանքավայ-

ռում բնական գազի պաշարները կազմում են *400-600 մլրդ մ³*, իսկ նավթի պաշարները կարող են անցնել *300 մլն տոննան:* Եթե հաշվի առնենք, որ «Ափրոդիտեն» և «Լևիաֆանը» նույն հանքավայրի երկու տարբեր հատվածներն են, ապա կարող ենք ասել, որ հանքավայրը վերջին 10 տարիներին հայտնաբերվածներից ամենախոշորն է:

«Ափրոդիտեի» հայտնաբերումից հետո Կիպրոսն, ամենայն հավանականությամբ, կդառնա էներգակիրների խոշոր արտահանող՝ հաշվի առնելով առաջին հերթին այն հանգամանքը, որ Կիպրոսի Հանրապետությունը չունի բնական գազի և նավթի սպառման խոշոր շուկա, ինչը պայմանավորված է երկրի տարածքում արդյունաբերական սեկտորի գրեթե ամբողջական բացակայությամբ, չնայած վերջին տասնամյակում Կիպրոսում ընդունվել են տարբեր տեսակի ռազմավարություններ՝ ուղղված կղզու տարածքում արդյունաբերության և վերամշակման սեկտորների զարգացմանը:

Կիպրոսի համար հայտնաբերված գազի և նավթի պաշարները կարող են երկրի անկախության և ինքնիշխանության պահպանման երաշխիք հանդիսանալ: Հունաստանում աղետալի տնտեսական ճգնաժամի սկսվելուց հետո ֆինանսատնտեսական իրավիճակը Կիպրոսում վատթարացել է, քանի որ կիպրական տնտեսությունը և ֆինանսական համակարգն անմիջականորեն կապված են Հունաստանի հետ: Վերջինիս սնանկացումը կարող է հանգեցնել նաև Կիպրոսի սնանկացմանը, ինչի արդյունքում՝ նաև անցած 10 տարիներին ցավալիորեն թափ առած արտագաղթի տեմպերի ուժեղացմանը: Վերջին հանգամանքը ցավալի իրողություն է Կիպրոսի հունական հանրապետության համար, քանզի հույն բնակչության արտահոսքին զուգահեռ՝ վերջին տարիներին մահմեդական, հիմնականում արաբ միգրանտների ներհոսքը երկիր աճել է, մանավանդ Իրաքի պատերազմից հետո[1]: Նոր միգրանտների հոսք Կիպրոսում ակնկալում են նաև Սիրիայից, որտեղ սկսված քաղաքական ճգնաժամը կարող է էլ ավելի խորացնել էթնոդավանական հակասությունները և դեպի Կիպրոս արտահոսքի համար նոր հիմք ստեղծել: Ակնհայտ է, որ իրադրությունը Սիրիայում առաջիկա տարիներին դժվար թե այնքան կարգավորվի, որ հասարակա-

[1] Fatima El-Issawi and Myria Georgiou - Media use at the crossroads: Nicosia // Journalism 2010 #11: P. 758-763.

կան կյանքը երկրում վերադառնա բնականոն հուն: Բացառված չէ, որ անհանգստությունները Սիրիայից կփոխադրվեն նաև Լիբանան, ինչի արդյունքում Լիբանանից դեռևս 1970-ականներին սկիզբ առած մարդկային արտահոսքը դեպի Կիպրոս նոր թափ կստանա:

Այս տեսանկյունից կիպրական իշխանությունները նավթային և գազային խոշոր պաշարները կարող են օգտագործել տնտեսական զարգացման ապահովման և հիմնականում հույների արտագաղթը կանգնեցնելու համար: Հասկանալի է, որ այս ամենը հաշվի առնելով՝ Կիպրոսը պատրաստ է անզիջում պայքար մղել նորահայտ հանքավայրերի նկատմամբ սեփական իրավունքների պաշտպանության համար, անգամ եթե սպառնալիքը գալիս է խոշոր և ազդեցիկ Թուրքիայից:

Թուրքիան և Միջերկրածովյան հանքավայրերը

2010-ից Թուրքիան ակտիվորեն վիճարկում է Կիպրոսի և Իսրայելի իրավունքները Միջերկրականում հայտնաբերված նավթագազային պաշարները տնօրինելու առումով: Ինչպես վերը բերված քարտեզից է երևում, հայտնաբերված հանքավայրերն այնքան հեռու են թուրքական ափերից, որ առանց որևէ վերլուծության կարելի է պնդել, որ թուրքական հավակնություններն այս հանքավայրերի նկատմամբ անհեթեթ են: Սակայն Անկարան այլ կարծիք ունի և որդեգրել է այնպիսի քաղաքական գիծ, որը կարող է բարդացնել Իսրայելի և Կիպրոսի հայտնաբերված հանքավայրերի մշակման ու համապատասխան մակակառույցի ստեղծման աշխատանքները:

Թուրքիան վիճարկում է այն հանգամանքը, որ հանքավայրերը գտնվում են այնպիսի ջրային տարածքում, որը բաժանված չէ հարևան պետությունների միջև: Թեպետ 2010-2011թթ. Իսրայելն ու Կիպրոսը համաձայնեցրին ծովային սահմանազատման սկզբունքները և բուն սահմանազատման մասին համապատասխան պայմանագիր ստորագրեցին, Թուրքիան շարունակում է վիճարկել իսրայելական և կիպրական իրավունքները:

2011-ի հունիսին Թուրքիայի էներգետիկայի նախարար Թ.Յըլդըզը հայտարարեց, որ Կիպրոսի Հանրապետությունը ոչ մի իրավունք չունի բնական գազի արտահանում սկսել՝ առանց պաշարների վերաբաշխման

հարցն Անկարայի հետ համաձայնեցնելու: Իսկ Կիպրոսի թուրքական մասի նախագահ Դերվիշ Էրօղլուն հանդես եկավ հայտարարությամբ, թե Միջերկրականում գտնված գազի պաշարները թեև գտնվում են կղզու հարավային հատվածի հարևանությամբ, դրանք չեն կարող շահագործվել միայն հույների կողմից, քանի որ ունեն ընդհանուր կղզիական նշանակություն[1]:

2011-ի սեպտեմբերի 8-ին, արդեն իսրայելա-կիպրական սահմանազատման պայմանագրի ստորագրումից հետո, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը *Al-Jazeera*-ին տված հարցազրույցում «Լևիաֆան» նախագծի հետ կապված հայտարարեց, որ *«Իսրայելը սկսել է գործել Միջերկրականում այնպես, ինչպես գործում է իրավունքներ ունեցողը: Իսրայելը նման իրավունքներ չունի»*[2]: Նույն հարցազրույցի ժամանակ Էրդողանը սպառնաց, որ թուրքական նավատորմը կարող է վերահսկողություն հաստատել Միջերկրականի ցանկացած մասում, որտեղ վիճարկվում են թուրքական շահերը: Թուրքիայի վարչապետի հայտարարությունը բավական մեծ արձագանք գտավ Իսրայելում, որտեղ այն ընկալվեց որպես թշնամական քայլ և սպառնալիք: Իսրայելի հետախուզության նախարար Դան Մերիդորը Էրդողանի հայտարարությունն անվանեց «*համարձակ և լուրջ*»՝ նշելով, որ Իսրայելը պատրաստ է ընդունել ցանկացած մարտահրավեր:

Էրդողանի հայտարարության հետ կապված իր հարցազրույցում Անկարայում Իսրայելի նախկին դեսպան Ալոն Լիելը, որն այսօր իսրայելական ամենահեղինակավոր վերլուծաբաններից է, պարզաբանեց, թե իր համար թուրքական մոտեցման հիմնական պատճառը ոչ թե նավթահանքերն են, այլ իսրայելա-կիպրական համագործակցության ակտիվացումը (որը, ինչպես պարզվեց հետագայում, ունի ոչ միայն տնտեսական, այլև ռազմական բնույթ): Ըստ Լիելի, գազի և նավթի հսկայական պաշարներ հայտնաբերելուց հետո Իսրայելը Կիպրոսի տարածքում և տեղի կառավարության հետ համատեղ հսկայական նավահանգիստ է կառուցելու, որը պետք է ապահովի նավթի և գազի արտահանումը դեպի համաշխարհային շուկաներ: Ըստ Լիելի՝ հենց սա է ամենից շատ անհանգստացնում Թուրքիային,

[1] Hürriyet Daily News | 9/6/2011.
[2] *Simon Henderson,* Turkey's Threat to Israel's New Gas Riches, Washington Institute, September 14, 2011.

քանի որ նման հսկայական նավահանգիստն անմիջական սպառնալիք է Անկարայի ռազմավարությանը[1], որի մասն են կազմում թե՛ Կիպրոսի հունական մասին «խեղդելը» և թե՛ Թուրքիայի՝ գլխավոր նավահանգստային հանգույցի վերածվելը:

Թուրքական սպառնալիքների ֆոնին Իսրայելն առանց որևէ անհանգստության 2011-ի ողջ ավարտը նվիրեց Կիպրոսի և Հունաստանի հետ համագործակցության խորացմանը, որի նպատակն էներգետիկ և այլ ռազմավարական ոլորտներում համագործակցության ծավալումն է: Նոյեմբերին Աթենք ժամանեց Իսրայելի փոխարտգործնախարար Դանի Այալոնը, որն իր բանակցությունների հիմնական նպատակ ներկայացրեց հետևյալը. «Մենք պատրաստվում ենք խոսել Հունաստանը և Կիպրոսն իսրայելական գազի բաշխման կենտրոնի վերածելու մասին»[2]:

Կիպրոսի և Հունաստանի հետ հարաբերությունների խորացման քաղաքականությունն Իսրայելը շարունակում է նաև վերջին ամիսներին, մանավանդ 2011-ի դեկտեմբերին թուրքական կողմի ռազմական արկածախնդրությունից հետո:

Իսրայելա-կիպրական ռազմական դաշինք

2011-ի դեկտեմբերի 20-ին թուրքական ռազմական նավատորմը «Ափրոդիտե» և «Լևիաֆան» հանքավայրերի հարևանությամբ անսպասելիորեն ռազմածովային վարժանքներ սկսեց, որոնց ժամանակ տարածքում գործող հորատման հետազոտական գործունեություն ծավալած իսրայելական և կիպրական նավերից պարզ երևում էր, որ թուրքական նավերը փորձարկում են փոքր ստատիկ նավերի (նույնպիսի նավերի, ինչպիսիք էին իսրայելական և կիպրական նավերը) վրա հարձակման սցենարներ: Սա և՛ Իսրայելի, և՛ Կիպրոսի կողմից դիտվեց որպես ակնհայտ սպառնալիք, ինչին հետևեց Իսրայելի ենթակառուցվածքի նախարար Ու.Լանդաուի հայտարարությունը. *«Մենք շարունակելու ենք մեր աշխատանքները և պատրաստ ենք պատասխանել ցանկացած հարձակման»*: Պատահարից 1 օր

[1] *Ethnan Bronner*, Threat by Turkish Premier Raises Tensions With Israel// New York Tomes, September 9.
[2] Israel ups gas field guard, plans exports // UPI, November 23, 2011.

անց Իսրայելը հայտարարեց, որ չեղյալացնում է Թուրքիայի զինված ուժերին ռազմական ինքնաթիռների համար նախատեսված *LOROP* համակարգերի մատակարարման մասին $90 միլիոնանոց պայմանագիրը:

Սակայն Իսրայելի իրական ռազմաքաղաքական պատասխանը Թուրքիային երևաց միայն 2012-ին: Փետրվարին Կիպրոսի նախագահի և Իսրայելի վարչապետի միջև կայացած բանակցությունների ժամանակ առաջին անգամ ամենաբարձր մակարդակով քննարկվեց իսրայելա-կիպրական փաստացի ռազմական դաշինքի ստեղծման հարցը: *Jerusalem Post*-ի ռազմական վերլուծաբան Յաակով Կացի կարծիքով՝ փետրվարյան բանակցությունների հիմնական թեման է եղել Կիպրոսի տարածքում *Իսրայելի ռազմաօդային բազայի ստեղծումը՝ Միջերկրականի նավթագազային հանքավայրերը պաշտպանելու նպատակով*[1]: Ռազմաօդային բազան, ամենայն հավանականությամբ, կստեղծվի կղզու հարավարևմտյան մասում գործող «Անդրեաս Պապանդրեու» ռազմաօդային բազայի հիման վրա: Ինչպես հաղորդում է *UPI*-ն, կիպրական կողմի համար առանցքային խնդիր է ոչ միայն իսրայելական ռազմաօդային, այլ նաև ռազմածովային բազայի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա պաշտպանել Կիպրոսի նավթագազային հանքավայրերը թուրքական հնարավոր հարձակումներից[2]: Ներկայումս, ինչպես հաղորդում են տարբեր իսրայելական և հունական ոչ պաշտոնական աղբյուրներ, այդ թվում և *DEBKA*-ն, Իսրայելն ու Կիպրոսը սկսել են ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման մասին համաձայնագրի մշակման աշխատանքները: Այն, որ Իսրայելն ու Կիպրոսը գնում են ռազմական դաշինքի ստեղծման ճանապարհով, քննարկվում է նաև հեղինակավոր վերլուծաբանների կողմից: Այսպես, Բեն-Գուրիոնի համալսարանի պրոֆեսոր Բենի Մորիսն ամերիկյան հեղինակավոր *«The National Interest»* հանդեսի պաշտոնական կայքի իր հեղինակային սյունակներից մեկը նվիրել է հենց այս թեմային՝ անվանելով այն «Իսրայելի նոր դաշնակիցները»[3]: Նույն կայքի մեկ այլ սյունակում էլ *The Los Angeles Times*-ի Թուրքիայի հա-

[1] Israel seeks Cyprus base to guard gas fields// Jerusalem Post, February 9, 2012.
[2] Israel tightens Med defense links over gas // UPI, January 11, 2012.
[3] *Benny Morris,* Israel's New Allies// February 2, 2012.

տուկ թղթակից Ջուլիա Դամիանովան նշում է, որ հակասությունները Թուրքիայի և Իսրայելի միջև կարող են իսկական էներգետիկ պատերազմ սկսել՝ հեռահար աշխարհաքաղաքական հետևանքներով[1]:

Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը քննելիս բավական մեծ ուշադրություն պետք է դարձնել Միացյալ Նահանգների քաղաքականությանը: Չնայած Վաշինգտոնը հակասությունների սրման պայմաններում կոչ է անում կողմերին բանակցությունների նստել և խաղաղ ճանապարհով լուծել խնդիրները, Միացյալ Նահանգները, այնուամենայնիվ, աջակցություն է հայտնում Իսրայելին և Կիպրոսին: Ինչպես հայտնում է *DEBKA*-ն, դեռևս 2011-ի դեկտեմբերի 20-ին, նախքան թուրքական նավատորմի կողմից զորավարժություններ սկսելը, ԱՄՆ պետքարտուղար Հ.Քլինթոնը Կիպրոսի ԱԳ նախարար Է.Կազակու-Մարկուլիսի հետ հանդիպման ժամանակ ասել է. *«Շարունակեք ակտիվորեն մշակել հանքավայրերը և ոչ մի ուշադրություն մի դարձրեք Թուրքիայի և նրա գործողությունների վրա»*[2]: Ամենայն հավանականությամբ, հենց Հ.Քլինթոնի կողմից հնչեցված աջակցության պատճառով արդեն հաջորդ օրը Կիպրոսի ԱԳ նախարարը *Woodrow Wilson* կենտրոնում ունեցած ելույթի հիմնական թեզը դարձրեց Թուրքիայի քննադատությունը՝ Անկարան ներկայացնելով որպես տարածաշրջանային հակասությունների խորացման աղբյուր, ինչը, ինչպես իր բլոգում նշել էր հանդիպման մասնակիցներից մեկը, բավական դրականորեն ընկալվեց նախարարին ունկնդրողների կողմից:

Այն, որ Միացյալ Նահանգները միարժեքորեն պաշտպանում է Իսրայելին և Կիպրոսին Միջերկրականի գազի և նավթի հանքավայրերի պատկանելության հարցում, ավելի ակնհայտ դարձավ արդեն 2012-ի մարտ-ապրիլ ամիսներին, երբ Միջերկրականում սկսվեցին համատեղ ամերիկա-իսրայելա-հունական ռազմածովային ուժերի զորավարժությունները: Մարտի 26-ից մինչև մայիսի 5-ը Իսրայելի, ԱՄՆ և Հունաստանի ռազմածովային ոժերը Միջերկրականի արևելյան հատվածի ողջ երկայնքով կազմակերպեցին և անցկացրին խոշոր զորավարժություններ, որոնք անմիջակա-

[1] *Julia Damianova, The Coming Mediterranean Energy War* // February 13, 2012.
[2] Turkish warships shell narrow water between Israeli and Cypriot gas fields // DEBKAfiles, 25 December, 2011.

նորեն կառավարվում էին ԱՄՆ ռազմածովային ուժերի 6-րդ նավատորմի շտաբի կողմից: Զորավարժություններին մասնակցեցին նաև Իսրայելի ռազմաօդային ուժերը, որոնք աջակցություն էին ցուցաբերում ըստ սցենարի հարձակման ենթարկված նավթահետախուզական նավերի և կայանների պաշտպանությանը: Զորավարժությունների հիմնական հատվածն ընդգրկում էր «Լևիաֆան» և «Ափրոդիտե» հանքավայրերը, որոնց նկատմամբ էլ հավակնություն ունեն թուրքերը: Որ զորավարժություններն ամերիկացիների և իսրայելցիների կողմից Թուրքիային անմիջականորեն զգուշացում չորակվեցին, դրանց իրական նպատակը չթաքցրին ոչ ոքից: Հենց այն հանգամանքը, որ զորավարժություններին տրվեց *«Noble Dina»* անվանումը, առավել քան խոսուն է. Կիպրոսի և Իսրայելի հիմնական էներգետիկ գործընկերն այս տարածաշրջանում *Noble Energy ընկերությունն է, և ակնհայտ է, որ հենց սա հաշվի առնելով էլ առաջ*ացել էր զորավարժությունների *«Noble Dina»* անվանումը: Պետք է նշել նաև, որ սրանք վերջին 20 տարիների առաջին ամերիկյան խոշոր ռազմածովային զորավարժություններն էին Միջերկրածովյան այս հատվածում, որոնց չէր մասնակցում Թուրքիան. մինչ այդ թուրքական նավատորմը մասնակցում էր *«Reliant Mermaid»* կոդային անվանումը կրող բոլոր զորավարժություններին, որոնք նույնպես կառավարվում էին ամերիկյան զինուժի կողմից:

Ակնհայտ է, որ Վաշինգտոնը Միջերկրականի ճգնաժամում կանգնել է Իսրայելի և Կիպրոսի կողքին: Իսրայելի դեպքում ամեն ինչ պարզ է, իսկ Կիպրոսի դեպքում, հավանաբար, 2 հիմնական դրդապատճառներ են ուղղորդում Վաշինգտոնին: *Առաջին* ՝զսպել Թուրքիայի աճը և սահմանափակել վերջինիս ուժեղացումը տարածաշրջանում, և *երկրորդ*՝ հաշվի առնելով, որ *Noble Energy*-ն կզիջի իր չափաբաժիններն ավելի խոշոր ընկերություններին, ապահովել, որ այդ ընկերությունները լինեն ամերիկյան, այլ ոչ թե ռուսական: Մանավանդ որ Մոսկվան Նիկոսիայի հետ սերտ համագործակցության փորձ ունի:

Պետք է նշել, որ կիպրական ուղղությամբ ամերիկյան շահերի պաշտպանության և առաջխաղացման համար Վաշինգտոնին սկսել է աջակցություն ցուցաբերել նաև Հունաստանը, որն այսօր հստակորեն կախված է

ամերիկյան ֆինանսական և տնտեսական օգնությունից և այդ պատճառով կարող է գնալ Ռուսաստանի հետ հարաբերությունների որոշակի զոհաբերման: Դրա մասին են վկայում Հունաստանի էներգետիկայի նախարար Գեորգի Պապակոնստանտինուի 2012թ. մարտի 28-ի հայտարարությունը Հունաստանի էներգետիկ ապագայի և էներգակիրների տարանցման քաղաքականության վերաբերյալ. «Աշխարհաքաղաքական իրավիճակը փոխվել է. մենք այլևս չենք խոսում միայն ռուսական միջանցքի մասին կամ այն միջանցքի, որը գազ է հասցնում մեզ: Մոտակա տարիներին մենք կստեղծենք նոր միջանցք՝ երրորդը, որը կհասնի մեզ Կիպրոսից և Իսրայելից»[1]:

Այստեղ կցանկանայինք նշել ևս մեկ կարևոր փաստ. չնայած Կիպրոսն ու Հունաստանն այսօր բավական բարդ տնտեսական իրավիճակում են, ինչը երկու պետություններին կարող է կանգնեցնել խոր ճգնաժամի առաջ, Համաշխարհային բանկը, որն իր վարկանիշային սանդղակներ կազմելու քաղաքականության մեջ ակտիվորեն հաշվի է նստում Վաշինգտոնի արտաքին քաղաքականության հետ, 2012-ին՝ գազի խոշորագույն պաշարներ հայտնաբերելուց հետո, զգալիորեն վերանայել է Կիպրոսի ներդրումային վարկանիշը: 2012թ. *«Doing Business»* զեկույցում Կիպրոսի վարկանիշի ամենակարևոր սանդղակը՝ «ներդրումների պաշտպանություն», կտրուկ վերելք է ապրել՝ բարձրանալով *64 տեղով*: Եթե 2011-ին այն 93-րդ տեղում էր, ապա 2012-ին 29-րդն է[2]: Նշենք, որ նման աճ ոչ մի պետություն չի արձանագրել: Ամենայն հավանականությամբ, Կիպրոսի վարկանիշի նման փոփոխությունը կապված է հենց բնական գազի հսկայական պաշարների հայտնաբերման հետ, որը պահանջելու է հսկայական արտաքին ներդրումների ներհոսք: Վարկանիշի փոփոխությունն էլ հենց այս ներհոսքի ապահովմանն ուղղված քայլ է, որը դրանց համար ստեղծում է բավական հմայիչ արտաքին տնտեսական ֆոն:

Միևնույն ժամանակ, կիպրական և իսրայելական շահերի պաշտպանության դիրքերից է սկսել հանդես գալ նաև պաշտոնական Մոսկվան, որը 2012-ի մայիսի սկզբին քննադատական գնահատականներով հանդես

[1] Today's Zaman – Greece, Israel, Greek Cyprus eye gas exports in future/ 28.03.2012
[2] Doing Business, 2012. Cyprus Profile // World Bank, 2012. 101 P.

եկավ Թուրքիայի քաղաքականության հարցով: Մայիսի 3-ին Ռուսաստանի ԱԳՆ մամլո խոսնակ Ալեքսանդր Լուկաշևիչը հայտարարեց, որ Ռուսաստանը բացասաբար է վերաբերվում Կիպրոսի սահմանային ջրերում նավթի և գազի որոնման աշխատանքներ ծավալելու Թուրքիայի որոշմանը և գնահատում է, որ այս քայլն ապակայունացում կմտցնի ողջ տարածաշրջանում[1]: Մայիսի 3-ի հայտարարությունից հետո արդեն մայիսի 15-ին Ալեքսանդր Լուկաշևիչը ևս մեկ անգամ հանդես եկավ Թուրքիային վերաբերող հայտարարությամբ: Նա, մասնավորապես, նշեց, որ նախօրեին Ռուսաստանի ԱԳՆ է հրավիրվել Թուրքիայի դեսպանը, որին պաշտոնական Մոսկվան բողոք է ներկայացրել Ստամբուլում մայիսի 12-13-ին անցկացված միջոցառումների վերաբերյալ, որոնց ընթացքում հնչել են հակառուսական հայտարարություններ և գնահատականներ. «Վրդովմունք է առաջացնում կոնֆերանսի ընթացքում ընդունված, այսպես կոչված, «հոչակագիրը», որում նշվում է. «պաշտպանություն Ռուսաստանի և նրա աջակիցների դեմ մղվող պայքարին, բոլոր մոջահեդներին՝ Դոկու Ումարովի գլխավորությամբ, որոնք շարունակում են սրբազան պատերազմը կովկասյան լեռներում»: Եվ այս ամենը տեղի է ունեցել թուրք պաշտոնյաների անմիջական ներկայությամբ»: Տվյալ դեպքում խոսքը Կովկասի միջազգային գիտաժողովի մասին է, որը դարձել էր հակառուսական քարոզչության հարթակ:

Ակնհայտ է, որ վերջին շրջանում նկատվող ռուս-թուրքական հակասությունները կիպրական խնդրի պատճառով կարող են էլ ավելի սրանալ, քանի որ թուրքական ոտնձգությունները Կիպրոսի տնտեսական շահերի հանդեպ որոշակիորեն հարվածում են նաև Ռուսաստանին, որը բավական լուրջ ներկայություն է ուզում ստանալ թե՛ Կիպրոսում և թե՛ Միջերկրական ծովում: Այս ամենը տեղի է ունենում Ռուսաստանի համար որոշակիորեն նպաստավոր ֆոնին, քանի որ 2012-ի սկզբից արդեն իսկ ակտիվորեն քննարկվում է «Նաբուկկո» նախագծի տապալման հնարավորությունը, ինչը զգալիորեն կնվազեցնի Թուրքիայի տարածաշրջանային էներգետիկ հանգույց դառնալու հեռանկարները, ինչն, իր հերթին, Մոսկվային Անկարայի հետ ավելի կոշտ քաղաքականություն վարելու հնարավորություն

[1] Российская газета, 4 мая, 2012.

կտա, որը պայմանավորված չի լինի վերջինիս հետ հավասարակշռության և շահերի փոխհամաձայնեցման իրավիճակի պահպանմամբ: Իսկ այն, որ Մոսկվան, ի դեմս Անկարայի, արդեն նոր մրցակցի է տեսնում, երևում է անզեն աչքով. ողջ ռուսական պետական մամուլը վերջին կես տարվա ընթացքում ողողված է հակաթուրքական հոդվածներով և գնահատականներով՝ պայմանավորված Թուրքիայի սիրիական քաղաքականությամբ:

Ինչևէ, ակնհայտ է, որ հակասություններն այս տարածաշրջանում խորանալու են, ինչին կնպաստի նաև ընդհանուր անկայունությունը Մերձավոր Արևելքում: Առաջիկա տարիներին սպասվում են նոր զարգացումներ, որոնք կարող են բերել թե՛ էներգետիկ և ռազմաքաղաքական հակասությունների սրման, թե՛ նոր ռազմաքաղաքական դաշինքների ձևավորման:

Մայիս, 2012թ.

ТУРЕЦКИЙ ФАКТОР В ЭНЕРГЕТИЧЕСКИХ «ВОЙНАХ» «ЛЕВИАФАН» И «АФРОДИТА»

Севак Саруханян

Резюме

Обнаружение крупных запасов природного газа в Восточном Средиземноморье превратило этот регион в арену новых энергетических и политических противоречий. С одной стороны, Израиль и Кипр, в территориальных водах которых и были обнаружены эти запасы, с другой – Турция, стремящаяся укрепить свои позиции во всем Средиземноморском регионе, нацелены на защиту своих прав относительно запасов морского газового месторождения.

Одна из основных особенностей развитий вокруг Средиземного моря заключается в том, что они имеют конкретное геополитическое значение и могут изменить всю систему энергетического сотрудничества и безопасности в регионе, уменьшив роль Турции и Каспия в плане обеспечения энергетической безопасности ЕС.